ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

1. Արտաքին գործերի նախարարություն	01.12.2021թ. N1111/50915-21
Հայաստանի Հանրապետության, «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտոբուսների ծրագիր» դրամաշնորհային համաձայնագրով Բանկը պետությանը հիմնադրամից տրամադրելու է դրամաշնորհ՝ 5 000 000 (հինգ միլիոն) եվրո գումարի չափով: Դրամաշնորհի միջոցները պետք է օգտագործվեն բացառապես Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաներ ձեռք բերելու նպատակով, որոնք պետք է գնվեն դրամաշնորհային Համաձայնագրի Բաժին 3.06-ին համապատասխան: Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ Բանկը Պետությանը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությանը ծանուցում է ուղարկում առ այն, որ Բանկն ընդունում է այն ապացույցները, որոնք պահանջվում են սույն Համաձայնագրի Բաժին 7.02-ի (եւ Բաժին 7.03-ի համաձայն, եթե Բանկը, Պետությունը եւ Ծրագրի իրականացման կազմակերպությունն այլ կերպ չեն համաձայնեցրել: Առաջնորդվելով «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության, «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտոբուսների ծրագիր» դրամաշնորհային համաձայնագրի վավերացումը կամ հաստատումը ՀՀ վարած արտաքին քաղաքականության տեսանկյունից համարում ենք նպատակահարմար:	Ընդունվել է՝ ի գիտություն:
2. Արդարադատության նախարարություն	**01.12.2021թ.** **N01/14.2/39267-2021**
Համաձայնագիրը չի պարունակում ՀՀ օրենքին հակասող, օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմեր: Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական կամ գույքային պարտավորություններ նախատեսելու դեպքում Համաձայնագիրը ենթակա է վավերացման ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետերի դրույթների հիմքերով:	Ընդունվել է՝ ի գիտություն:
3. Ֆինանսների նախարարություն	**01.12.2021թ.** **ՆՆ/5-2/29748-2021**
Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ Պետություն), «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ծրագրի իրականացման կազմակերպություն) ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկի) միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտոբուսների ծրագիր» դրամաշնորհային համաձայնագրով Բանկը համաձայնում է Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության տարածաշրջանային հիմնադրամից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել դրամաշնորհ 5 մլն եվրո գումարի չափով: Համաձայնագրի 3. 04 (բ) (2) բաժնի համաձայն՝ եթե Բանկն այլ բան չի սահմանում, ապա Պետությունն իր համար կիրառելի և ընդունելի լինելու պարագայում պետք է աջակցի Ծրագրի իրականացման կազմակերպությանը՝ կատարելու դրամաշնորհային համաձայնագրով սահմանված իր պարտականությունները, այդ թվում՝ ձեռնարկելով բոլոր օրենսդրական, կարգավորող կամ այլ անհրաժեշտ կամ ցանկալի գործողություններ և Ծրագրի իրականացման կազմակերպությանը	Ընդունվել է՝ ի գիտություն:

հատկացնելով և նրան ապահովելով կամ կազմակերպելով, որ ապահովվի աջակցությամբ ծրագիրն ավարտին հասցնելու նպատակով՝ Ծրագրի իրականացման կազմակերպության համար այդպիսի անհրաժեշտություն առաջանալու դեպքում: Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության համար Համաձայնագիրը կարող է առաջացնել ֆինանսական պարտավորություններ:	
4. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	30.11.2021թ. ՊԳՍ/27.1/31002-2021
Հայաստանի Հանրապետության, «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ ՎԶԵԲ) միջև 2021թ. նոյեմբերի 24-ին ստորագրվել է «Երևանի ավտոբուսների ծրագիր» դրամաշնորհային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայանագիր): Դրամաշնորհի չափը կազմում է 5 մլն եվրո: Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում «Դաբլյու Վայ Զի Ինթերնեյշնլ Լիմիթիդ» խորհրդատվական ընկերության կողմից մշակվել և Երևանի քաղաքապետարանին է տրամադրվել Երևան քաղաքի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցը, որի համաձայն՝ երթուղային ցանցի սպասարկման համար անհրաժեշտ է ձեռք բերել 845 հատ տարբեր չափսի ավտոբուսներ: Նոր տրանսպորտային ցանցի շարժակազմերի ներդրման ֆինանսական աջակցության հնարավորության հարցը Երևանի քաղաքապետարանը դեռևս 2019թ. գարնանը քննարկել է ՎԶԵԲ-ի հետ, որն իր պատրաստակամությունն է հայտնել աջակցելու ավտոբուսների ձեռքբերմանը՝ համապատասխան սուվերեն վարկային պայմանագրի շրջանակներում: Նախնական գնահատմամբ ավտոբուսների ընդհանուր քանակի ձեռքբերման համար անհրաժեշտ կլինի 120-150 մլն եվրո: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության և ՎԶԵԲ-ի միջև ձեռք բերված նախնական համաձայնությունը ավտոբուսների ձեռքբերման առաջին փուլի ֆինանսավորման համար (25 մլն եվրո, որից 5 մլն եվրո Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության տարածաշրջանային հիմնադրամի (E5P) կողմից դրամաշնորհային միջոցներ) և տրանսպորտային բարեփոխումների անհետաձգելիությունը՝ Երևանի քաղաքապետարանը տրանսպորտային բարեփոխումների ծրագրի առաջին փուլի շրջանակներում 2021թ. փետրվարի 1-ին հայտարարել է նախնական գնման (Advanced Procurement) երկփուլային մրցույթ՝ շուրջ 100 սեղմված բնական գազով շահագործվող 12 մետրանոց ցածրահատակ ավտոբուսների ձեռքբերման նպատակով: Մրցութային հայտերի հանձնման վերջնաժամկետը սահմանված է եղել 2021թ. մարտի 31-ը: Ներկայումս ստացված առաջարկները գտնվում են գնահատման փուլում: Հաշվի առնելով Երևան քաղաքում գործող տրանսպորտային ցանցի բարելավման առաջնահերթությունը և Երևան համայնքի քաղաքացիների անվտանգ ուղևորափոխադրումները՝ Տարածքային կառավարամն և ենթակառուցվածքների նախարարությունը և Երևանի քաղաքապետարանը նպատակահարմար են համարում Համաձայնագրի վավերացումը կամ հաստատումը:	Ընդունվել է՝ ի գիտություն:
5. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (Պետական գույքի կառավարման կոմիտե)	30.11.2021թ. ՊԳՍ/27.1/31002-2021
Հայաստանի Հանրապետության, «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտոբուսների ծրագիր» դրամաշնորհային համաձայնագրով «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի կարգավորման շրջանակում Հայաստանի Հանրապետության համար գույքային պարտավորություններ նախատեսող դրույթներ առկա չեն:	Ընդունվել է՝ ի գիտություն: